


ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան դին և Պոլսոյ հոյս 3 ՄՆՃ.
Վեցամս. և Պոլսոյ 4 ՄՆՃ.
Պոլսոյ 5 ՄՆՃ.
Օտար երկրներու 50 Ֆր.
Մանուկներու տոգը մէկ անգամի հա-
մար 3 զուրուշ, երկու անգամի հա-
մար 2 զուշ է. ուսերի անգամներու
համար զատ սակարկութիւն կըլ-
լայ :
Խրաքանչիւր թիւ 2 զընաց թուղթ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳԱԾԱԴԱՐԱՆ

ՀԱՆՈՒՍԱԳԱՋՕՐԵԱՅ

ՊԱՅՄԱՆՔ

Դուրս գնացած լրագրաց հանրու-
ծալքը խմբագրութեան վրայ է :
Լրագրաց վերաբերեալ նամակ
կամ որ և ինչ գրութիւն խմբագր-
—Տնօրէնին պիտի ուղղուի, զառա-
քիս Սանտրքըլար Հաստիսի թիւ
198, Նօրօ խան, Մասիսի գրասեն-
տի :
Հանրու ծախքը չվճարուած նա-
ւ չընդունուիր :
Չտուրած նամակ, յօդուած, կէ-
տ չեն տրուիր :

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿԱՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 41 ՅՈՒՆԻԱՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Բ. Դրան և Ռուսիոյ միջև վերջ-
նական հաշտութեան վրայ բանակ-
ցութիւնը կը շարունակին, բայց մին-
չև հիմայ տակաւին գաշնադրու-
թիւնը չ'ենթանցեալ, թէև կ'ըսուէր
թէ 'ի մնաց պիտի ստորագրէի : Այ-
սու ամենայնիւ բոլոր գլխաւոր դժ-
ուարութիւնները փարատած կ'երե-
ւին : Բ. Դուռը Բօսֆորիցան Գարա-
տաղի յանձնելու համար պէտք եղած
միջոցները ձեռք առաւ, Արմաւուր-
ներուն գիմարութիւնը զապրու-
համար ճեղքաբար զօրք զընկեց, և զին-
ւորական հրամանատար Հիւսէյին
փաշան Արմաւուրներուն պատուի-
րակներն ընդունելով յայտարարեց
թէ կայսերական կառավարութիւնն
որոշած է Պէրլին գաշնադրութիւնը
գործադրել, և հետեւեալ Բօսֆոր-
իցան պարպելով Գարատաղիցոյ
նոր սահմանէն դուրս այժմ գրաւած
տեղերն ետ առնուլ : Հրամանատարն
զգացուց Արմաւուրներուն թէ դի-
մադրութիւնն անօգուտ էր : Միւս
կողմէն Բ. Դուռն Հիւսէյնական խընդ-
րոյն կարգադրութեան համար պատ-
ուիրակներ անուանելով գաշնադրու-
թիւնը գործադրելու մասին իւր ան-
կեղծ գիտատրութեան արդարեայ
տուաւ : Ռուսիա ևս փոխադարձ զի-
ջումներ ըրած է երկու կէտի վրայ,
նախ՝ պատերազմի առաջնաց մասին
կը հաճի եղեր վճարման պայմանա-
ժամն երկարաձգել և Բ. Դրան դիւ-
րութիւններ տալ, երկրորդ՝ չ'աղբեր
եղեր իւր այն առաջարկութեան վը-
րայ, Բ. Դուռը թէ Պէրլին գաշնադ-
րութեան բոլոր արամադրութիւնները
գործադրելու պարտաւոր ճանչէ ինք-
զինք Ռուսիոյ առջև, որով միւս տե-
րութեանց նկատմամբ Ռուսիոյ նա-
խապատել գիրք մը կուտար : Ռուսի
թէև տէրութիւնը վերջնական գաշ-
նադրութեան բանակցութեանց նը-
կատմամբ չեղբուցութիւն կը պահեն և
չ'են միջամտեր, սակայն երբ Շուվա-
լով կոմսն առաջարկեալ վերջնական
գաշնադրութեան ծրարելն Անգլիոյ
կառավարութեան հաղորդեց, այս
վերջինն յայտարարեց թէ չ'ընտր Բ.
Դրան խրատ տալ որպէս զի վերջել-
եալ կէտն ընդունի : Անգլիոյ այս ո-
րոշումը մեկնութեան կարօտ չէ, եթէ
Բ. Դուռը վերջնական գաշնադրու-
թեան մէջ խոստում տար թէ Պէրլի-
նի գաշնադրութիւնը գործադրելու
պարտաւոր է Ռուսիոյ առջև, Ռու-
սիա առ թիւ պիտի ունենար ուղած
ժամանակ թուրքիոյ վրայ ճնշում բա-
նեցնելու, ըսելով թէ այս ինչ կէտը
չը գործադրեցիր, կամ այն ինչ կէ-
տին գործադրութեան եղանակը լաւ

չէ. այս կերպիւ Ռուսիա թուրքիոյ
գործոց միջամտելու բաց դուռ մը
պիտի ունենար, նախաձեռնար գիրք
մը բռնելով միւս տէրութիւններէն,
որք անմիջամտութեան սկզբունքն
ընդունած են :
Բ. Դուռն Անգլիոյ խորհրդով այս
կէտին վրայ ուրիշ խմբագրութիւն մը
առաջարկած է, որ կըսուի թէ Ռու-
սիոյ կողմէն ևս ընդունուած է : Այս
պէս գլխաւոր գաշնադրութիւնները
լուծուած կը համարուին : Բայց տա-
կաւին վերջնական գաշնադրութեան
չ'ենթանցելը կընայ ուրիշ պատճառներ
ունենալ, կամ դուռն երկրորդական
կէտերու վրայ ևս դուռ բանակցու-
թիւնը կը շարունակի : Թեւեալ ասոնց
վրայ գաշնադրութիւններ ալ ծագած
են : Ռուսը կը պատրաստուէին իւր
մէջին իրենց զօրքը տանելու, ասոր
համար Պոլսոյ նաւամատոցներ չի-
նեցին, շտեմաններ վարձեցին, Ան-
գլիոյ պաշտօնող ճանապարհները կը վե-
րանորոգէին, և կըսուէր թէ գաշ-
նադրութեան նշանակած պայմանա-
ժամն Անգլիոյ պաշտօնող մէջ զօրք չը
թողով միայն Արմաւուրներու թափ-
գաւառէն և Պոլսոյ մէջ որոշեալ
չափով զօրք պիտի համախմբէին : Բայց
ահա Եւրոպական լրագրքը զրոյց մը
կը յիշեն, որուն նայելով Ռուսաց Ոս-
մանեան երկիրը պարպելու պայմանա-
ժամն վրայ տակաւին համաձայնու-
թիւն գոյացած չէ, Ռուսաց պարպած
տեղերը գրաւելու համար Բ. Դրան
անցեալները Սէլամի փաշայի հրամա-
նաց ներքև կողմած շարժուել զօրա-
գունդը տակաւին նշանակեալ դիր-
քերը գրաւած չէ :
Իսկ Եւրոպական տէրութիւնը հա-
մաձայնած են եղեր Ռուսիայէն խընդ-
րելու, որպէս զի գաշնադրութեան
որոշած պայմանաժամն մէջ Օսման-
եան երկիրը պարպէ : Բայց բոլոր որում
փիլիպի խառն յանձնախորհուրդը
տեղեկագրած է թէ Օսմանեան զօրաց
Արմաւուրներն իւրմէջի վաւառը մանկն
և Պաշտօններուն վրայ ամրութիւն
չ'ունենան անկարելի է առանց նոր ա-
րիւնհեղութեանց, ասոր առաջն առ-
նելու համար կը խորհուէր Եւրոպա-
կան խառն զօրք գնել յիշեալ գա-
ւառը : Բայց Բ. Դուռը բացարձակա-
պէս կընդդիմանայ ասոր, քանզի Պէր-
լինի գաշնադրութեան կարեւոր խո-
տորումը կըլլայ այնպիսի որոշում մը :
Ասոր հետ մէկտեղ, որովհետև Պու-
լարը իրենց ազգային զօրաց հրամա-
նատրներուն և իրենց ընդհանուր
կառավարչին և Պոլսէն կարգուեալ
գէտ կը բաղդեն, տէրութիւնը կա-
ռաջադրեն եղեր Եւրոպայի սպաներ
անուանել, որք հաւանականաբար
Գաղղիացի պիտի ըլլան, ինչպէս նաև
Արմաւուրներն իւրմէջի ընդհանուր կա-
ռավարին :
Եւրոպական լրագրքը համաձայն

նութեամբ կը յայտարարեն թէ առ-
կալն մնացած խնդրոց կարգադրու-
թիւնը Մեծ—Եպարքոս Բարձր խա-
րէտին փաշային ազգեցութեան շը-
նորհին է : Թուրքիոյ առաջին նա-
խարարն իւր առջև ունի Պ. Թիէրի օ-
րինակն, որ Գաղղիոյ վերականգման
մեծ ծառայութիւն ըրաւ հաշտու-
թիւնը կնքելով, պատերազմական
տուգանքը վճարելով, երկիրն օտար
զրաւումէ ազատելով և ներքին բա-
րեկարգութիւնն ու բարգաւաճանքը
վերագարձնելով : Մեծ—Եպարքոսն
սկանաւորէ եւրոպական ազգաց վի-
ճակին, և իւր գաղտնարկութիւնը
կէս եւրոպական է : Ուստի բնակա-
նաբար իրաց վիճակին վրայ մի միայն
թուրքական տարրին մէջ մեծցած
մարդոց նման անձուկ տեսակէտով
չ'ակնարկիր, այլ խնդիրներն իբրեւ ըս-
տոյգ պետական մարդ ուշադրու-
թեան կառնու, և Եւրոպիոյ գործակ-
ցութեան արժէքը կը ճանչէ : Նորին
Բարձրութիւնը Ռուսիոյ հետ վերջ-
նական գաշնադրութեան խնդիրը
լուծելէ ետեւ՝ անմիջապէս Աւստրիոյ
հետ կնքուելիք պայմանագրութիւնը
ձեռք պիտի առնու եղեր : Տարա-
կոյս չկայ ուրեմն որ եթէ, ինչպէս
մեծայայտ ենք, վեհ. Սուլթանին վըս-
տահութիւնը շարունակէ միշտ պատ-
ւել Նորին Բարձրութիւնը, քիչ ա-
տենէն արտաքին գաշնադրութիւնն
ըր վարատելով ներքին բարեկարգ-
մանց ամենապարտաւոր գործին ձեռք
կը դարձնուի, որ միայն կընայ ժողո-
վրդեւան շունչ տալ և երկիրը վերա-
շինել : քանզի, ինչպէս յայտնի է, եր-
կիրը կատարեալ վերաշինութեան և
վերաշինողի մը պէտք ունի, որ բա-
ւական ժամանակ ունենայ այս մեծ
գործն 'ի զրուս հանելու : Եւրոպա-
կան լրագրաց մէջ զրոյց մ'ալ յիշ-
ւած կը տեսնենք, որուն նայելով
Բարձր. Մեծ—Եպարքոսը զինուորա-
կան ծախքերը նուազեցնելու մըտա-
գիր է եղեր : Տարակոյս չկայ որ այս
պիտի խնայութիւն մը մեծագէտ օգ-
տակար կը լինի բոլոր վարչական մարմ-
նոյն, որոյ կենսական ոյժը քաղուած
է պատերազմական պատրաստու-
թեանց պատճառաւ : Քանի որ օտար
զօրքն երկիրն մէջ էր և քաղաքական
խնդիրքը առ կալ կը մնային, հար-
կաւ կայսերական կառավարութիւնն
անպատրաստ չէր կրնար կենալ : Բայց
խնդիրներուն լուծումն յապաղել,
երկիրն անկերպարան վիճակն երկա-
րաձգել էր : Մեծ—Եպարքոսն իւր
բարձր համաճարով այս վիճակին վերջ
տալու կաշխատի : Աւերողք է ըսել
թէ հաստարակաց կարծիքն իւր գոր-
ծին յաջողման փախաբող է, և հա-
մախոսութեամբ կ'ոպատէ :

Ճանաչանքն թէ Օսմ. փոխառու-
թեան և այլ մէկ երկու խնդրոց վը-
րայ կարծեաց անհամաձայնութիւն
ծագեր է մէկ կողմէ Լորտ Պիքոն-
ֆելտի և միւս կողմէ Լորտ Սալիսպը-
րի և Սըր Սթաֆօրտ Նօրթ-քոթի մի-
ջև : Բայց չկարծուիր որ այս անհա-
մաձայնութիւնն հետեւանք մ'ունե-
նայ Լորտ Պիքոնֆելտի համար, ո-
րոյ դիրքն առ այժմ անդրդուելի կե-
րելի :
Անգլոսառաւմէն երկա՞ վերջին հե-
ռադրալոց նայելով, Անգլիացիք
առ այժմ Գաղտնաբերէն անդին քա-
լելու միտք չունին օգերուն խառն-
ութեան պատճառաւ : որով հաղորդակ-
ցութիւններն և պաշարաց ու ռազ-
մավթեաց փոխադրութիւնը մեծա-
պէս կը գծուարանայ արդէն դժ-
ւարանցանքի և վայրագ ցեղերէ շըր-
ջապատեալ լեռնոտ երկրին մէջ : Միւս
կողմէն լուր կայ թէ Շիր Ալի Լաի-
քը Բեդրապուրի չափի երթայ, ո-
րովհետև Ռուսաց սահմանադրութեան
հաւանքն պէս աղաքաբարութիւն ե-
ղեր է իրեն թէ Ռուսիոյ կողմէն պը-
ղատնական պարզ համակրութեան
զատ ուրիշ բան պէտք չէ սպասէ :
Այս զրոյցներուն անուղղապէս
հաստատութիւն կուտայ Անգլիոյ
գաղթականութեանց նախարարին վեր-
ջին օրերս (յունի. 6) ըրած այն
յայտարարութիւնը թէ Անգլոսառա-
ւայ պատերազմն աւարտած պէտք է
նկատուի, և թէ Անգլիոյ և Ռուսի-
ոյ միջև յարաբերութիւնը խիստ բա-
րեկամական են :
Ըսողներ կան սակայն թէ Անգլա-
նքատանայ մէջ անդրդաւառոց վիճակն
յաշտ չէ, և այս պատճառաւ իրենց
յառաջիկա պայմանները գաղտնիցու-
ցած են :
Գաղղիոյ արտաքին գործոց նա-
խարարին շրջաբերականն որոյ թարգ-
մանութիւնն հրատարակեցինք մեր
երեկուան թուով, քաղաքական ա-
նուամենաւոր մըտք բաւական տպաւորու-
թիւն ըրած կ'երևի Պ. Վալանթինովի
բացորոշ ընդունելը հասկնցուի թէ
Գաղղիոյ կառավարութիւնն 1870 էն
'ի վեր բռնած առանձնացեալ չէղք
գիրքը թողով՝ արտաքին աշխար-
հավարութեան մէջ գործունեաց բա-
ժին մը պիտի ունենայ այսուհետեւ :
Բաժին մը, որ միշտ օգտակար կըր-
նայ լինի քաղաքականութեան մէջ
է ազատութեան և յառաջդիմութեան
գաղտնի, մանաւանդ Արմաւուր մէջ :
Գերմանիոյ և Անգլիոյ մէջ առեւ-
տրական տաղանային ախուր աղղե-
ցութիւնն օր քան զօր կը ծանրանայ :
վերջին լուրերը կը ծանուցանեն
թէ Մանչեսթրի տարադադրոյններն
'ի խորհուրդ գաւառուելով՝ որոշեց

են ատկապում յարարներ թիւն
բանալ կեղծանակն Արիւնի հետ :
որ 400 միլիոն բանակն ունի : Այդպէս
Հնդկաստան տարածած Անգլիական
քաղաքական գումարը 2500 միլիոն
կարող էր հասնի :

Մանչէսթըրի, Պիտերսբուրգի, Պրիս-
թուրի և Նիւքարնի դրամատեսարար-
բանալիքն են եղել 10 միլիոն լիւրա
դրամալիքով ընկերութիւն մը կողմ-
էն : Արիւնի արեւելեան ծովեզ-
րէն մինչև Նիւքարնի լինէն երկարութե-
ղի մը շինելու :

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

(ՀԱՎԱՍՏ)

Այս առաջագր հոսքն հետաքրքր

Կարկառ 21 յունի

5000 Անգլիան լեռնակալ, որը 21-
ամբի կրճին մէջ գումարեալ էին, քա-
նի մը կոխեցին : Եսե յիւրեան կզան :

Պէտք 21 յունի

Տասն օր վիճարանութենէ ետե ազ-
գային ժողովը Պիտերսբուրգի լեռն-
քուէարկեց ծախսուց գումարը մէկ միլիոն
ու կէս պահեստէն իւր և նոր արոց քանի
մը ծրարները մերժելով :

Ասոր վրայ երեւոյց նախարարն հը-
րաժարական տուաւ, բայց չընդունուե-
ցա :

Պուրէշ 21 յունի

Բուսանիոյ կառավարութիւնն որպէս
Սուրբաշ աղաւաղահանգիստ հրատա-
րակել :

Լոնդոն 21 յունի

Օսմ. Բան.	41 3/8
Փոխ.	4863 44 1/4
»	4869 44
»	4871 531 1/4
»	4872 24 1/2
»	4873 42 1/4
» Եղիպատ.	71 1/8
Անգլ. Բան.	96 5/16

Փարիզ 21 յունի

Օսմ. Բան. 11,43

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Հասարակաց շինութեան նախա-
րարութեան թարգման Գեորգ Բա-
ղարատ էֆէնտի թուրք-Հիւսնա-
կան յանձնարարութիւն Օսմանեան ա-
ռաջին պատուիրակ Ղազի Մուխթար
միաշային քով Գաղղիքէն լեռնի քար-
տուղար անուանեցաւ :

Այս առաւելութեան թուրք լրագ-
րաց մէջ հրատարակեալ պաշտօնական
ազդ. մը կը ծանուցանէ թէ թղթադը-
րամի բարձման յանձնարարութիւն պաշ-
տօնի սկսած թուականէն՝ այն է սեպ-
տեմբեր ամսոյ 28էն մինչև նոյեմբե-
րի վերջը 32 միլիոն 970 հազար 816
լիւր թղթադըրամ շրջաբերութենէ քա-
շելով ոչնչացման դրոշմ դարկած և
Օսմ. կայսերական Պանքային յանձ-
նած լինելով, յիշեալ թղթադըրամներ
ընէ երէկ Կ. Պոլսի Ենի-ճամիի հըրա-
պարակին վրայ այլուեր են :

Վազըթի խօսքին նայելով, երկու
տական բարենորոգման յանձնարար-
ութիւն տեսնուած զանազան եկամու-
տին առ նուազն 13 միլիոն ոսկի և
ծախքը 10 միլիոն ոսկի որպէս է, և ե-
կամուտներն աւելցնելու միջոցներուն
վրայ պիտի խորհի . մասնաւորապէս
մաքսատանց համար նոր կանոններ
պիտի առաջարկէ :

Գոհութեամբ կը ծանուցանուի
թէ Գաւանթիւնայի տեսչութեան կող-
մէ այս առաւելութեան թուրք լրագ-
րաց մէջ հրատարակեալ պաշտօնա-
կան ազդ. մը մեր երէկուան թուով
Փաշա-Պաշէնի և Արաբիսթի օր-
գիւղերուն առողջական վիճակին վը-
րայ առաւած տեղեկութիւնը կը հա-
տատեն, այսինքն թէ յիշեալ գիւղե-
րուն մէջ ժամադրուած կամ ուրիշ ո՛ր
տարախոսակի հիւանդութիւն մը չը
կենայով, միայն թիֆուսի մասնա-
ւոր դէպքեր տեղի ունեցած են, և
այս նկատմամբ պաշտօնական ազդը
տեղի ունեցած ընտելութեանց յիշելով

հետեւեալ մանրամասնութիւնները կը
յուշեալ .

Փաշա-Պաշէնի մէջ միայն մէկ
կին թիֆուսէն բուժուած է, և այ-
ժմ աղէկացաւ վրայ է . իսկ Արա-
բիսթի (կամ Արաբիսթ) գիւղին
մէջ ալ, որ 1860—2000 հոգի բնա-
կէն ունի, միայն 11 հիւանդ կայ, որոց
5ը թէթե կերպով թիֆուսի և մը-
նացածն ալ այլ և այլ հիւանդու-
թեանց ենթարկեալ են : Արաբիսթ-
ի օրգիւղին մէջ անցեալ նոյեմբեր
ամսին 'ի վեր 18—20 հոգի թիֆու-
սէն բուժուելով, ամսոյմէ միայն 5
հոգի մեռած են :

Պաշտօնական ազդը կը յայտա-
բարէ վերջապէս թէ ոչ միայն յիշեալ
երկու գիւղերուն, այլ և Կ. Պոլսոյ և
ոչ մէկ կողմն տարախոսակի հիւան-
դութիւն մը կայ այս միջոցին :

Ձրոյց ծաղկելով թէ Սէլանիկի մէջ
ժամադրուա երեւան եղած է, երէկ Բ-
Դուռն հեռագրով տեղեկութիւն ու-
ղեց տեղւոյն կուսակալէն :

Կըսուի թէ Ձմեռանիոյ ծովափը
շինող Գաղղիական ընկերութիւնը Գա-
րաքէյէն մինչև Կ. Պոլսոյ մաքսատան
առջև քարէ կամուրջ մը շինել առա-
ջարկեր է, երկու միլիոն ոսկի ծախ-
քով :

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ԷՍԶԱՄԸ ՈՒՄՈՒՄԻԷ

Երէկ իրիւն զօրեցու	12,26
Այս առաւելութեան բացուեցաւ	12,26
Կէս օրին	12,26

Բուսանի կրկնութիւն	Փր.	43 30
Թղթադըրամ	Լր.	410

ԲՆՈՒՄՈՒՄՈՒՄՈՒՄ

Կ. Պոլիս 10 Բաւաւար		
Սոսիէթէ Ենիքարի Բաժ.	Անգլ. Լր.	4,20
» Փոխարկութեան		3,
Կ. Պոլսոյ Պանքային		6, 5
Քրէտի Ենիքարի		5,
Քրէտի Օսթրո—Թուրք		—
Գում. 1863	Յր.	64
» 1863		72
» 1869		68 1/2
» 1872		20 1/2
» 1873		61 1/2
Երաւուայ	Օսմ. Լր.	1 73

ԲՆՈՒՄՈՒՄՈՒՄՈՒՄ

Անգլ. Լր.	109 38
» Երազան ոսկի	87 10
» Երազան ոսկի	89 18
» Գըրմիշ	81 10
» Զինք Գրանք	—
» Զինք Կոյ	124
» Պընձ	185

Օսմ. կայսերական Պանքան այսօր
425 լր. գին որպէս է փոխանակութեան

ԱԶԳԱՅԻՆ

Քաղ. Ժողովն երէկ 'ի նիստ հրա-
ւիրուած էր Գեորգ Խորհրդական Սրբա-
ղանի նախագահութեամբ, բայց մե-
ծադոյն մասի չդիմեցան պատճա-
ռաւ՝ ներկայ ժողովականք համարա-
կալութեան գիւնարի տեղեկագրինը-
կասմամբ քաղ. ժողովոյ կողմէ տըր-
ւելիք պատասխանին վրայ միայն խոր-
հըրդակցեցան :

Մանուկեան Սենեքերիմ, Հա-
ղարան կարապետ և Սահակեան
Յարութիւն էֆենտիներն երէկ հըրա-
ժարական տուին քաղ. ժողովոյ ան-
դամակցութենէ :

Պատրիարքարանի Բագու. քեահ-
եասի Պրէնկեան Արքայաճառ էֆենտին
Տիգրանակերտի խնդրոյն համար ե-
րէկ դատական դործոց նախարարին
ներկայանալով, Ն. վանութիւնը
ժամուցեր է թէ յիշեալ դատաւին
մէջ անցած անցքերը ընենու և
պէտք եղած բարեկարգութիւնները

դործադրելու պաշտօնով յատուկ
ընենէ պիտի զրկուի Տիգրանակերտ

Մշտ առաջնորդ Գեորգ Գրիգորիս
կալիսկոյտ հրաժարագրի մ'ուղղած
է Ս. Պատրիարք Հօր, դանդաղելով
Մշտ Ս. կարապետի վանահայրութե-
նէն դադարեալ Մամբրէ կալիսկոյտ-
սին և նորա քանի մը համակուհայ
դէմ, որք իրենց անձնական կիրքն
ու շահերը գոհացնելու համար՝ ա-
մեն վատ միջոցներ 'ի դործ կը գնեն,
մինչև իսկ ազգայնաւ մասնաւորիւն-
ներ ընելով տեղական լիւսանութեանց
առջև :

Կըյուսանք որ Ս. Պատրիարքն և
ազգային վարչութիւնը Գեորգ Գրիգոր-
իս կալիսկոյտին այս միջոցին Մշտ
մէջ ներկայութեան կարեւորութիւնը
կշարժելով արժան եղած միջոցները կը
սնորհեն, որոց առաջինն է ըստ մեզ
Մամբրէ կալիսկոյտն և անոր համա-
կուհներն հեռացնել Մշտն :

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԳԵՐ. Տ. ԳԱՐԵԳԻՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ
ՍՐՈՒՄՆՏՏԱՆՅՈՒՄ

(Ծրարանութիւն և Ժըժ Կէս Ենի 2226)

Արդ, Ս. Հայր, ահա կ'ամփոփեմ
իմ տեսութիւններս, առաջարկելով
որ ուշադրութեան առնու ազգային
ձեռնհաս մարմինը և 'ի դործ գնէ
հետեւեալ միջոցները, իբրեւ դարման
դաւառացի ազգայնաց քաղաքական
և բարոյական կեանքին :

Պէտք է հաստատել կեդրոնական
մեծ առաջնորդութիւնները մեծ ա-
ռաջնորդներէ, և մանրերը խորու-
անոց իրաւաւորութեան ներքեւ . ու-
րովհետեւ Միւսիլի կամ Գայմադամ
եղած տեղերու առաջնորդական վի-
ճակաց բոլոր դործքերը կ'ընեն միւ-
թասարեքութեանց կամ վախու-
թեանց կեդրոնը, և հոն նաադ ա-
ռաջնորդներն իբրեւ թէ իրենց պար-
տականութիւն չհամարելով՝ ձեռնկա-
լու չեն ըլլար եկած խնդրոց, ուստի և
հարկ կ'ըլլայ դաւառին առաջնորդին
անձամբ երթալ կեդրոնը, երբեմն
ալ ելլել դիմել մինչև Պոլսի և ծանր
ծախքերու դանքը բանալ, վիճա-
կը փոքր ըլլայ կամ մեծ, առաջնորդ-
դին և առաջնորդարանին ծախքը
հաւատար է. այդ փոքրիկ դաւառի
թեմականք չեն կրնար իրենց սակա-
ւաթութեամբ առաջնորդ մը պա-
հել. ոչ գրագիր, ոչ գիւնար, ոչ ար-
ձանագրութիւն, ոչ առաւել ունին
և ոչ առաջնորդին ամասկան կրնան
վճարել : Առաջնորդներն հարկահա-
նի մը պէս ժամանակ և երես կը հա-
լեցնեն ասկէ անկէ բան մը կորու-
լելու իրենց իրաւունքը, վանքերը
ուստի, պողոն ժողովուրդ ելլել, որ
թէ պատիւ չ'երբեր և թէ 'իսկ մը
անտեղութեանց առիթներ կ'ընծայէ-
կը նկատին նաեւ կալիսկոյտ ալ ըլլալ
ասոնք . նոր ծախք : Պէտք է բոլոր
փոքր վիճակները ենթարկել կամ մի-
այնել Միւսիլի ասարեքին մը կամ վախի
մը նստած տեղւոյն առաջնորդարա-
նին, և առաւ անոր իրաւունք, որ իւր
կողմէն վախանողներ կարգէ այն
տեղերը, ինչպէս կառավարութիւն-
նը, նոյնպէս և պատասխանատու-
թիւնը իրեն վրայ ձգելով : Յայտնի
է թէ Պատրիարքարանի յարաբերու-
թիւններն ալ ամփոփ և կանոնաւոր
կ'ըլլան դաւառաց հետ այս կերպով :

Գնել նաեւ մէն մը առաջնորդաց
քով օրէնագէտ և լեզուագէտ ար-
ժանեաց տէր աշխարհական մը, իբ-
րեւ խորհրդական, իբրեւ թարգման,
և իբրեւ դաւառ քեահեասի, որ կըր-
նայ մեծ դործեր դործել . և որով
հետեւ առաջնորդը կառավարութեան

ինկած խնդիրներով և ազգային մա-
րտնչ նախագահելով կարի շատ ըլ-
րադրամներ կուտնայ, պէտք է յա-
տուկ պաշտօնաց վարդապետ մը դը-
նել անոր քով, որ թէմերը այց առնէ,
առհասարակական օրինաց դործադ-
րութեան և վարժարանաց բարեկար-
գութեան հսկէ, ուսեալ և պարկեշտ
վարդապետ մը :

Կրնամ ներկայել հոս ինձ ծանօթ
վիճակաց առաջնորդութեանց այս
ձեւին վերածելու հարեանցի ծրագիր
մը, թողնով վանքերու վրայ ունե-
ցած դիտարկութիւններս ուրիշ առ-
թիւ մասուցանելու :

Ա. Սաման և Պափրայ իր շրջա-
դայնաւ Սամանի թեմին է, կեդրոնէն
3—6 օր հեռի, և Նիկասար թիւսառի
թեմ : Սամանի Սերասարդիւլայէթ,
Սամանի Պափրայ և Նիկասար Տրապի-
զանի . պէտք է Պափրայ, Սաման և
Նիկասար միացնել ճանիկի առաջնորդ-
ութեան հետ, որ 8 կամ 10 ժամ
հեռի են, և առաջնորդը նստեցնել
Սաման, ուր կը նստի Միւսիլի ասարեքի
և կը կառավարէ Պափրայ ճանիկի և
Նիկասար :

Բ. Ձիւլէ և Հեքէք գայմադամու-
թիւններ են թիւսառի առաջնորդու-
թեան թեմ, բայց Սամանի միւթա-
սարեքութեան ենթակայ, ուստի 8
կամ 10 ժամ հեռի են . պէտք է
միացնել Սամանի առաջնորդութեան
հետ :

Գ. Սերասարդի առաջնորդութեան
պէտք է միացնել թիւսառ քաղաքը
որ գայմադամութիւն է Սերասարդի
վիլայէթին ենթակայ : 15 ժամ հեռի
իւր տան և չորս կտոր՝ այլ սակա-
ւաթիւ հայաբնակ գիւղերով, Սե-
րասարդի առաջնորդութեան պէտք է
միացնել նաեւ Տիւրիկու վիճակը, որ
տան և մէկ գիւղերէ կը բաղկանայ,
և քաղաքով մէկտեղ 1000 տուն հայ
բնակիչ ունի, գայմադամութիւն է
Սերասարդի վիլայէթին ենթակայ և ան-
կէ 22 ժամ հեռի Սերասարդի առաջ-
նորդութեան կցելու : Նոյնպէս Ման-
հըրէս վիճակը, որ Ենիքարի և
Տէրէնտէ, որք արդէն Սերասարդի
մաս և անոր կառավարութեան տակն
են, և որոց Հայ բնակաց դործքերը
դրեթէ բոլորն ալ արդէն Սերասարդի
առաջնորդին կուգայ :

Դ. Ալին, Արաբիք գայմադամու-
թիւն են, և Ձիւլէմադ. միւսառ-
ութիւն, խորհրդի միւթասարդ-
թութեան ենթակայ, և այս երեք
փոքրիկ վիճակներն իրարմէ 8—10 ժամ
հեռի են, կամ միացնել ասոնք և դատ
առաջնորդութիւն մը կազմել, կամ
Չարսանագի հետ մէկտեղ խորհրդ-
դու առաջնորդութեան կցորդել,
ուստի 12 ժամ հեռի է :

Ե. Բաւլու, ճաւաղղուր, Սեւրակի,
Արդընի, Ձըն, ընդ որ գայմադամու-
թիւն և միւսառութիւն են՝ Արդու-
—Մատենի միւթասարդութեան են-
թակայ, մէկ առաջնորդութեան վե-
րածել և կեդրոնը Արդընու—Մատեն
ընել ուստի անեմէն հեռաւոր թէմը
12 ժամ է :

Զ. Արման, Կէրքէնիս, Գէմալի
որ գայմադամութիւն և միւսառութիւն
թիւն են՝ Երզնկայոյ միւթասարդութեան
տակը, նոյնպէս և Գեորգանը
միացնել Երզնկայոյ առաջնորդութեան
հետ :

Ը. Բաւլու, Սպեր, Բաւլու, Խը-
նուսը, Գրի, որ գայմադամութիւն
ներ են կարնոյ վիլայէթին տակը,
միացնել կարնոյ առաջնորդութեան
հետ :

Բ. Բաւլու, որ գայմադամու-
թիւն է Մշտ միւթասարդութեան
տակը, միացնել Մշտ առաջնորդութեան
հետ, ևս ևս :

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

Ժողովրդական

Թարգմանեց Կարապետ Կարամանյան

Աղէքսանդր Տիմո Գաղղիայի միջնադարյան վարչական կարգի մասին...

Կը ծախուի Եկեղի ճամբի Զինկիր-Լէր ճառագայի թիւ 2, Ս. Դուկասեան...

ՆՈՐ ԸՆԹԵՐՅԱԼՈՒՆ

Յօդինեց Մ. Մամուրեան

Բաղմահման Մամուրեան էֆենդի-տիկ սոյն 140 երեսէ բաղկացեալ նոր գործը...

Թովթ. ՄԱՐԿՈՍԻ ԱԳԱՐԷԻՍԻԱՆ ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻ, ԱԶԳԻ ԵՒ ԵԿԵՂԵՑՈՒ ԱԶԳԱՅԻՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Առ պատուականաց պատուական

Տէր Ներսէս Առեւտրական Սեպ

Եւ Պատրիարք Օսմանեան Հայոց

Ամեն. Ներսէս Սրբազան Պատրիարքի հրամանաւ գրուած և Արամեան տպարանէն գեղեցիկ տպագրուած թեմա...

Կը ծախուի Եկեղի ճամբի Զինկիր-Լէր ճառագայի թիւ 2, Ս. Դուկասեան...

ԴԱՐԱՐԱՐԱՆ

ԶԵՐԱԶ-ՏԵՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ

Ինչպէս անունն արդէն կը յայտնէ, այս մասնիկին երկու երկուստարդ հեղինակներուն գրած դամբանականներուն հաւաքածոյն է, որ կը գրուի...

ԲԱՆԱԼԻ

ՀԱՅՏԵՐԷՆ ԾԱՐԱԳՐՈՒԹԵԱՆ

Դրեց Մ. Մամուրեան

Ահաւասիկ գեղեցիկ մէթոտ մը, որ Մամուրեան էֆենդիին աշխատանքներուն մասին կը խոստովանէ...

Այս գրքոյը Զմիւռնիոյ Տէմեքեան եղբարց տպարանէն ի լոյս բնծայուելով, կը ծախուի Եկեղի ճամբի Զինկիր-Լէր ճառագայի թիւ 2, Ս. Դուկասեան...

ԽՄԱՐԴԻՐ-ՏՆՈՐԷՆ

Կ. Ս. ԻԿԹԻՃԻԱՆ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ ԼՐԱԳՈՅ ԴԱՄԱՐԱՆ ԵՐԵՎԱՆ



ՇԻՐԲԵԹԻ ԽԱՅՐԻԷԻ ՇՈՂԵՆԱԿՆԵՐՈՒՆ ԵՐԹԵՒԵՆԻ ԺԱՄԵՐԸ

1879 ՅՈՒՆՎԱՐ 1 ԵՐԿՈՒՇԱԹԻ ՕՐԷՆ ՄԿՍԵԱԼ

ՄԻՆԶԵՆ ՅՈՒՆՎԱՐ 31

ԲՈՍՓՈՐԷՆ ԻՋՆՈՂ ՇՈՂԵՆԱԿՆԵՐԸ

Table with 3 columns: Ժամ, Երեւոյն, Թիւ. containing ship schedule data.

ԱՐԷՆԷՆ ԳԵՂԷՆ

Table with 3 columns: Ժամ, Երեւոյն, Թիւ. containing ship schedule data.

ԱՐԷՆԷՆ ԵՂԵՐԴ

Table with 3 columns: Ժամ, Երեւոյն, Թիւ. containing ship schedule data.

Table with 3 columns: Ժամ, Երեւոյն, Թիւ. containing ship schedule data.

ԿԱՄԱՐԻՋԷՆ ԵՒ ՆՈՂ ՇՈՂԵՆԱԿՆԵՐԸ

Երեւոյն ԵՂԵՐԴ

Table with 3 columns: Ժամ, Երեւոյն, Թիւ. containing ship schedule data.

ԱՐԷՆԷՆ ԳԵՂԷՆ

Table with 3 columns: Ժամ, Երեւոյն, Թիւ. containing ship schedule data.

ԱՐԷՆԷՆ ԵՂԵՐԴ


Table with 3 columns: Ժամ, Երեւոյն, Թիւ. containing ship schedule data.

Ամեն երկուստարի (բացի տօնէ) առաւ և տօն 2 1/2 Եկեղի-մահալէն լողեցան մինչեւ Միջուր, Պէյլիք, Թար, Եկեղի...



ԱՅՏԵՐԻ ՎԻԿՈՐԸ

Ով որ իր մաղերուն թափելը չուզեր, «Այնքան վիճօր» կոչուած մաղի անուշահոտ չորսէն գործածելու է...



ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԱՂԱԶԱՆ

Կ. Պոլսի Գաղղիայի Միջնադարի կը ծախուի, «Այնքան վիճօր» կոչուած մաղի անուշահոտ չորսէն...

Լրագիրս ամեն օր կը հրատարակուի բաց ի կիրակի և տօն օրերէ :

Բաժանորդագրութեան տեղն է Դաւաթիա Սանտըճըլար ճառագայի թիւ 198, Նորո խան Մասիսի խաղաղարանունը :

ԶՄԻՒՆԻՄ. Ստեփան Է. Տէմեքեան. ՆԻԿՈՒՄԻՅԱ. Խոսրով ՝ Էսկիճեան. ՊՐՈՒՍԱ. Ստեփան Է. Թանկեան. ԲՈՏՈՍԹՈ. Արմ. Տ. Արիստակէս աւագ քահանայ ձեռնադրուած :

ԱՂԻՍԱՆՈՒՄՈՒՄ. ՍԱՄԱՐԷ. ՏՐԱՊԵՏՈՆ. ԱՄԱՐԱՆ. ՍԵՐԱՍԻԱ. ԵԻՂԱԿԻԱ. ԽԱՐԵՐԻ.

ԵՐԶԵԿԵ. Թաղէս Է. Բաղրատունէ. ԿԱՐԵՆ. Կարապետ ՝ Զաքարեան. ՄՈՒՇ. Միքայէլ ՝ Փօթիկեան. ՎԱՆ.

ԲԵՐԻԱ. Սեդրակ ՝ Խոսրովեան. ՏԻՂԱՆԱԿԻՍ. Թորոս Է. Փափուգեան.

ԵՂԵՐԴ. ՄԱՐԱՇ. ՅՈՒՆԱՆ. ՖԵՐԶԱՏԱՂԱՅ. ՖԵՐԶԱՏԱՂԱՅ. ԵԱՆ.

ՏՓԻՒՄ. Պ. Նիկողայոս Տ. Դանդեան. ԿԱՒԱՐԱՆ. Պարոտ աղա Հեթումեան :